«Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերության

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ IV-k հորատանցքից ջրի արդյունահանման ծավալի ավելացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) «Ընդհանուր տեղեկատվություններ Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի վերաբերյալ» բաժնում կլիմայի նկարագրության մեջ ներառել «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01-2011». Նորմատիվային փաստաթղթերում առկա «Ջերմուկ» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի (օդի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության, քամի, մթնոլորտային տեղումներ) ամսական և տաևեկան տվյալները՝ աղյուսակային տեսքով, իսկ կլիմայի նկարագրական տեքստը կազմելիս հենց այդ արժեքներից:	**Դիտողությունը ներկայացվում է երկրորդ անգամ:** Առաջին անգամ ներկայացվել է նախնական գնահատման հայտի լրամշակման ժամանակ (տես նախնական գնահատման հայտի վերաբերյալ դիտողությունների ամփոփաթերթը), որը գնահատվել և ընդունվել է: Համապատասխան տեղեկատվությունը ներկայացվել է նախնական գնահատման հայտի լրամշակված տարբերակում, էջ 29-32, իսկ Հաշվետվության մեջ՝ էջ 31-35:
Հաշվետվության մեջ անհրաժեշտ է ընդգրկել նախագծման համար ուղեցույց ծառայող իրավական ակտերի վերաբերյալ առանձին կետ՝ ներառելով իրավական ակտերը:	**«Նախագծման նորմատիվ-իրավական հենք» ենթաբաժինը ներկայացված է եղել Հաշվետվության մեջ, էջ 23-24:**
Հաշվետվության մեջ անհրաժեշտ է ներառել նաև առանձին կետ՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ, որտեղ անհրաժեշտ է հաշվի առնել, որ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի «ՀՀ Վայոց ձորի մարզի բնության հուշարձանների անձնագրերը հաստատելու մասին» 2014թ. օգոստոսի 5-ի 219-Ն հրամանով հաստատված «Բախտի կամար» բնական քարե թունել բնության երկրաբանական հուշարձանի անձնագրի (Հավելված 1) և հայտով ներկայացված կոորդինատային տվյալների համաձայն բնության հուշարձանի և հորատանցքի միջև ընկած հեռավորությունն ուղիղ գծով կազմում է մոտ 30մ, իսկ մինչև պահպանման գոտու սահման՝ մոտ 25մ, հետևաբար գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել անձնագրով սահմանված պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները, ինչպես նաև ներառել այն հայտի հետ ներկայացված բնապահպանական կառավարման պլանում:	**Դիտողությունը ներկայացվում է երկրորդ անգամ:** Դիտողությանը պատասխանվել է նախնական գնահատման հայտի լրամշակված տարբերակում (տես նախնական գնահատման հայտի վերաբերյալ դիտողությունների ամփոփաթերթը), իսկ Հաշվետվության մեջ էջ 46-48-ում ներկայացված է եղել առանձին կետով՝ «2.10. Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ»: «Կիրճ» տեղամասի IV-k հորատանցքը հորատվել և շահագործական պաշարները հաստատվել են դեռևս 1965թ.-ին, իսկ շահագործումն սկսվել է 2016թ-ից: Նշված գործունեությունն իրականացվել է հաշվի առնելով ՀՀ բնապահպանության նախարարի «ՀՀ Վայոց ձորի մարզի բնության հուշարձանների անձնագրերը հաստատելու մասին» 2014թ. օգոստոսի 5-ի 219-Ն հրամանով հաստատված «Բախտի կամար» բնական քարե թունել բնության երկրաբանական հուշարձանի անձնագրով սահմանված պահպանության և օգտագործման ռեժիմի

	առանձնահատկությունները, որոնք կպահպանվեն նաև նախատեսվող գործունեությունն իրականացնելիս: Ինչ վերաբերում է բնապահպանական կառավարման պլանին, ապա այն ներկայացվում է Նախագծի և Հաշվետվության հետ, այլ ոչ թե Հայտի: Բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվությունը ներառվել է նաև բնապահպանական կառավարման պլանում՝ էջ 4:
Բնապահպանական կառավարման պլանի 3. Բնապահպանական միջոցառումներ կետում նախատեսել նաև բուսական և կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:	Հանքավայրի տարածքում կենդանիների բներ, որջեր չեն դիտարկվել: Չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեության և նրա հարակից տարածքում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, կենդանիների տեսակների հանդիպելը քիչ հավանական է: IV-k հորատանցքի տարածքը հիմնականում քարքարոտ, բուսազուրկ տարածք է, բացակայում է հողի բերրի շերտը, չկան անտառապատ տարածքներ: Հաշվի առնելով նախատեսվող աշխատանքների բնույթն ու տևողությունը (մինչև երկու օր), ազդեցությունը շրջակա միջավայրի վրա լինելու է զրոյական և չի հանգեցնելու էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը, ինչպես նաև՝ արտանետումների և թափոնների առաջացմանը, հետևաբար բուսական և կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:
Հայտում ներկայացնել տեղեկատվություն, թե որքան է հորատանցքից մինչև առողջարան խողովակի մղման բարձրությունը:	**Դիտողությունը ներկայացվում է երկրորդ անգամ:** Առաջին անգամ ներկայացվել է նախնական գնահատման հայտի լրամշակման ժամանակ (տես նախնական գնահատման հայտի վերաբերյալ դիտողությունների ամփոփաթերթը), որը գնահատվել և ընդունվել է: Համապատասխան տեղեկատվությունը ներկայացվել է նախնական գնահատման հայտի լրամշակված տարբերակում, (IV-k հորատանցքից մինչև «Գլաձոր» առողջարան ջրի մղման բարձրությունը կազմում է շուրջ 109մ, էջ 8), իսկ Հաշվետվության մեջ՝ (էջ 8)
Հորատանցքի խողովակի պոմպի համար օգտագործվող էներգիայի աղբյուրը և	**Դիտողությունը ներկայացվում է երկրորդ անգամ:**

խողովակաշարի անխափան շահագործման միջոցառումները:	Առաջին անգամ ներկայացվել է նախնական գնահատման հայտի լրամշակման ժամանակ (տես նախնական գնահատման հայտի վերաբերյալ դիտողությունների ամփոփաթերթը), որը գնահատվել և ընդունվել է: Համապատասխան տեղեկատվությունը ներկայացվել է նախնական գնահատման հայտի լրամշակված տարբերակում, էջ 8), Հաշվետվության մեջ՝ էջ 8:
Հավելված բաժնում կցել «Բախտի կամար» բնության հուշարձանի անձնագիրը:	«Բախտի կամար» բնական քարե թունել բնության հուշարձանի անձնագիրը **ներկայացվում է ի լրումն «Հավելված»-ի**:
ՀՀ Քաղաքաշինության կոմիտե. (պայման) Հետագա գործառույթները ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան իրականացման պայմանով:	«Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերությունը պարտավորվում է նախատեսվող գործունեությունը իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին:
ՀՀ ԱԻՆ. (առաջարկ) Հաշվետվության մեջ ներկայացված «Օդի աղտոտվածության հաշվետվություն»- ը (էջ 53-60) ներկայացնել հաըերեն լեզվով՝ համաձայն «Լեզվի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ -52, 30.03.1993թ.) 4-րդ հոդվածի:	Առաջակը հնարավոր չէ իրակացանցել, քանի որ այն չի համապատասխանում Հաշվետվության էջ 53-60-ում ներկայացված նյութին:
ՀՀ Կադաստրի կոմիտե. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման լրամշակված նախագծի մեջ թիվ IV-k հորատանցքի՝ 7-րդ և 8-րդ էջերում ներկայացված կոորդինատները միմյանց չեն համապատասխանում:	Լրամշակված Նախագծի էջ 7-ում ներկայացված են աշխարհագրական կոորդիանտները, իսկ էջ 8-ում՝ կոորդիանտերը ներկայացված են ARM WGS-84 համակարգով, ինչը Հաշվետվության «Հավելված» բաժնում ներկայացվում է Հողամասի հատակագծով :

Ինչ վերաբերվում է ԿԳՄՍ նախարարության կողմից ներկայացված պայմանին, տեղեկացնում եմ, որ Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Կիրճ» տեղամասի թիվ IV-k հորատանցքից ջրի արդյունահանման ծավալի ավելացման աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, լինելու է զրոյական:

Մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների, հողային ծածկույթի, կենսաբազմազանության և պատմամշակութային հուշարձանների վրա ազդեցությունը բացակայում է:

IV-k հորատանցքից ջրի արդյունահանման ծավալի ավելացման աշխատանքների բնույթով պայմանավորված, դրանց իրականացման արդյունքում բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի դեգրադացիա հնարավոր չէ:

Ելնելով վերոգրյալից հայտնում եմ, որ տվյալ տարածքում կատարված հնագիտական ուսումնասիրությունների եզրակացությունների ներառում, ինչպես նաև հուշարձանների և հուշարձանակիր տարածքների մասին եզրակացություն տալու ունակ մասնագետների ընդգրկման անհրաժեշտություն չկա :

«Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերության լաբորատորիայի վարիչ՝
Տեխ.գիտ.թեկնածու՝ Գ. Կարապետյան